հարկ ի մէջի, որ խափանեաց զարժանին» (Դարանաղցի, էջ 337)։

Այսպէս Ներսէս վրդ. Սեբաստացիի ընտրութիւնը այս առաջին անգամ կը վիժի (վասնզի յետոյ 1648ին պիտի ըլլար կաթողիկոս) և կ'ընտրուի Սիմէօն եպիսկոպոս Սեբաստացի, «որ ի մանկութենէ սպասաւոր եւ ժամանաց էր երկուց կաթողիկոսացն»՝ Յովհաննէսին և Մինասին, «բայց չէր նման Ներսէսին ամենայն իրօք»։

Սիմէօն կաթողիկոս կուտայ Գրիգոր Կեսարացիի «ձեռագիր ուրեք կանգուն, եւ ապա օծանեցին կաթողիկոս եւ նստուցին յաթոռ» (Դարանաղցի էջ 338)։

Այս իրողութիւնը կը հաստատէ Հալէպցի Ղալամքեար Տէր Ովանէս անուն տաղասաց մը որ իր ժամանակին դէպքերն ալ արձանագրած է իր տաղարանին զանազան էջերուն վրայ։ Ահա իր խօսքերը։

«Թվին ՌՁԲ (= 1633) ի մայրաքաղաքն ի Սիս դրին Կեսարիոյ Գրիգոր վարդապետին եւ Գրիգոր վարդապետին Զէյթնցոյ եւ Ներսէս վարդապետին Սեբաստացոյ եւ Յակոբ վարդապետին Կարկառացոյ եւ Մխիթար վարդապետին Յարեւելցոյ, սոցա ամենեցուն համաձայնութեամբն դրին յաթոռ կաթողիկոսութեան զՏէր Սիմէօն Արքեպիսկոպոսն, զոր Տէր Աստուած զինքն անփորձ եւ անսասան պահեսցէ խաղաղ կենօք» (Սուրիահայ Տարեցոյց, 1925, էջ 285)։